

## ԿԱՐԾԻՔ

### Պաշտոնական ընդդիմախոսի

Տաթևիկ Արթուրի Զհանգիրյանի <<Արցախի Հանրապետության Դրմբոնի և Կաշենի մետաղահանքային արդյունաբերության ազդեցության գնահատումը հող-ջուր-բույս համակարգում>> թեմայով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Զ.01.01.՝ Ընդհանուր երկրագործություն, հողագիտություն, հիդրոմելիորացիա և ազրոքիմիա մասնագիտությամբ գուղատնտեսական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

### Ատենախոսության թեմայի արդիականությունը

Մինչև Արցախի Հանրապետության անկախացումը արդյունաբերական խոշոր ձեռնարկությունների բացակայության շնորհիվ հանրապետության տարածքի էկոլոգիական վիճակը գնահատվում էր բավարար: Սակայն վերջին մի քանի տասնամյակներում մետաղահանքային արդյունաբերության, ինչպես նաև ոչ մետաղական օգտակար հանածոների, հատկապես ածխի հանքի շահագործումը կարող է բացասական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա: Չնայած, որ հանրապետության տարածքում հանքարարի մշակումը և բափոնների կուտակումը կատարվում է ժամանակակից առաջնակարգ տեխնոլոգիաներով, սակայն շրջակա միջավայրի վրա դրանց բացասական ազդեցությունները առկա են: Հետևաբար այդ ոլորտում կատարվող ուսումնասիրությունները խիստ հրատապ նշանակություն ունեն, ինչպես բնապահպանական, այնպես էլ բնակչության առողջության պահպանման տեսակետից և բխում են Արցախի Հանրապետության գուղատնտեսության զարգացման ռազմավարական նպատակներից:

### Ատացված արդյունքների, գիտական դրույթների և եզրակացությունների

#### Ճշտությունը, գիտական նորույթը և հիմնավորման աստիճանը

Ատենախոսության գիտական դրույթները արտացոլված են գիտական նորույթում, որը հնարավորություն է տալիս Արցախի Հանրապետության հանքարդյունաբերության զարգացման մեկնարկային փուլում ուսումնասիրել

Դրմբոնի և Կաշենի տարածքներում շահագործվող մետաղահանքերից շրջակա միջավայր արտանետվող ծանր մետաղների որակական և քանակական բնույթը հող-ջուր-բույս համակարգում, ըստ աղտոտման աղբյուրից ունեցած տարբեր հեռավորությունների վրա, որտեղ կարևոր նշանակություն նունեն ռելիեֆը, բուսապատվածության աստիճանը, քամիների ուղղությունը և ուժգնությունը:

Հիմք ընդունելով զյուղատնտեսական նշանակության հողօգտագործման կազմակերպման տեսական հիմնադրույթների և փորձարարական հետազոտությունների համապարփակ վերլուծության արդյունքները, ձևակերպվել և լուծվել են հանքավայրերից տարբեր հեռավորության վրա գտնվող հողերում ծանր մետաղների քանակները և դրանց ազդեցությունը հարակից տարածքների, Սարսանգի ջրամբարի և Կաշենի արտեզյան ջրերի որոկական հատկանիշների վրա, ինչպես նաև բուսական նմուշներում ծանր մետաղների պարունակության հարցերը, տրվել է մետաղահանքերի հանքաբարը վերամշակող կոմբինատների և պոչամբարների գումարային էկոնոմիկական ազդեցությունների գնահատականը:

Ատենախոսական աշխատանքի գիտական նորույթը և հիմնավորվածության աստիճանը մեկնաբանված են հետևյալ դրույթներում.

- Պարզաբանվել են Դրմբոնի և Կաշենի հանքավայրերի տարածքներում հողերի ազրոքիմիական հատկանիշները, ինչպես նաև այդ հողերում ծանր մետաղների որակական կազմը և քանակական պարունակությունը:
- Բացահայտվել է նշված հողատարածքներում մշակաբույսերում ծանր մետաղների պարունակությունը աղտոտման աղբյուրից տարբեր հեռավորությունների վրա:
- Որոշվել է Դրմբոնի հանքավայրի մոտակայքում գտնվող Սարսանգի ջրամբարի ու Կաշենի հանքավայրի տարածքում գտնվող խորքային հորի արտեզյան ջրերի ընդհանուր հիդրոքիմիական ցուցանիշները, քիմիական տարբերը և ծանր մետաղների պարունակությունը:
- Որոշվել է Դրմբոնի և Կաշենի հանքավայրերից 5-6կմ հեռավորության վրա կետերից վերցված հողային և բուսական նմուշներում ծանր մետաղների պարունակությունը ստուգիչ տարածքներում:

Հեղինակի կողմից գիտական դրույթների և եզրակացությունների ձշության հիմնավորվածությունը կասկած չի հարուցում, քանի, որ դրանք հիմնականում ստացվել են շրջակա միջավայրի պահպանության բնագավառում ընդունված ժամանակակից ձշօրիտ մեթոդիկայով։ Ատենախոսի կողմից կատարված են 7 եզրակացություններ, որոնց բովանդակությունը տրամաբանորեն բխում է ատենախոսության գիտական հետազոտության արդյունքների և ստացված գիտական նորույթի բովանդակությունից։

Գիտական եզրահանգումների գիտագործնական արժանահավատությունը հաստատվում է նաև ատենախոսի կողմից կատարված 3 գործնական առաջարկների բովանդակությամբ։

### **Արդյունքների նշանակությունը գիտության և արտադրության ոլորտներում**

Ներկայացված ատենախոսական աշխատանքի գիտական և գործնական արժեքը բխում է հետևյալ հիմնական հիմնավորումներից։ Կատարված հետազոտությունները հնարավորություն կտան ճիշտ գնահատել ստեղծված ու փոփոխվող էկոլոգիական իրադրությունը Դրմբոնի և Կաշենի, ինչպես նաև շահագործման համար հեռանկարային համարվող մետաղահանքերի տարածքներում և դրանցից տարբեր հեռավորության վրա, կանխատեսել տարածաշրջանի էկոլոգիական վիճակը և մշակել բնապահպանական միջոցառումներ, որոնք ուղղված են էկոհամակարգերի ծանր մետաղներով աղտոտվածության նվազեցմանը։

Կատարված հետազոտությունների արդյունքները և եզրահանգումները կարող են հիմք հանդիսանալ նաև հանքարդյունաբերական օբյեկտների շրջակա տարածքները գոտիավորելու համար՝ համաձայն ծանր մետաղների կուտակման աստիճանի։

Ատենախոսությունում ստացված արդյունքները և եզրահանգումները կարող են լիովին կիրառվել Դրմբոնի և Կաշենի, ինչպես նաև հարակից շրջանների բնապահպանական ծրագրերի մշակման, հողերի պահպանության և տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման ուղղմավարության հիմնադրույթների իրականացման ժամանակ։

## **Ատենախոսության բովանդակության և ձևավորման գնահատականը**

Ատենախոսության բովանդակությունը բաղկացած է ներծությունից, չորս զլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, գրականության ցանկից, հավելվածից: Ներածությունում հիմնավորված են խնդրի հիմնավորումը և արդի վիճակը թեմայի արդիականությունը, հետազոտության նպատակն ու, խնդիրները, նախանշվող նպատակից բխող ծրագրային խնդիրները, աշխատանքի գիտական նորույթը, գործնական նշանակությունը, աշխատանքի փորձագնահատումը և հրատարակումները, աշխատանքի ծավալը և կառուցվածքը:

**Ատենախոսության առաջին գլխում ներկայացված են Արցախի Հանրապետության բնակչիմայական պայմանները:** Արցախի աշխարհագրական դիրքը, ռելիեֆի ձևերի բազմազանությունը, կլիմայական ցուցանիշները՝ մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը, միջին տարեկան և բացարձակ առավելագույն ու նվազագույն ջերմաստիճանային ցուցանիշները: Տրված է Մարտակերտի շրջանի աշխարհագրական դիրքը, զբաղեցրած տարածքը, բնակչության թվաքանակը և բնակավայրերի քանակը:

Ներկայացված է Արցախի Հանրապետության ջրագրական ցանցը և հողային ռեսուրսների բնութագիրը, ինչպես նաև բուսական և կենդանական ռեսուրսների բնութագրերը և դրանց ներկա վիճակը:

**Ատենախոսության երկրորդ գլխում բերված են հետազոտության օբյեկտները և մեթոդիկան:** Հետզոտության օբյեկտներ են հանդիսացել Արցախի Հանրապետության Դրմբն և Ծաղկաշեն գյուղերի վարչական տարածքում գտնվող Դրմբոնի և Կաշենի մետաղահանքավայրերը, որոնք տեղակայված են Մեհմանայի հանքային հանգույցում: Մանրամասն ներկայացված են ուսումնասիրվող օբյեկտների տարածքում հողերի, ջրերի և բույսերի նմուշառումների մեթոդական մոտեցումները, ինչպես նաև վերցված նմուշների լաբորատոր ուսումնասիրությունների մեթոդները:

**Ատենախոսության երրորդ գլխում գրականության ակնարկի տեսքով բերված են տարբեր տարածաշրջանների համար ծանր մետաղների դերը, որպես շրջակա միջավայրի վտանգավոր աղտոտիչներ:** Ներկայացված է արյունաքերության տարբեր ճյուղերից արտանետված թափոնների բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա: Տրված է կենսոլորտն աղտոտող նյութերի շարքում առավել

վտանգավոր համարվող 10 աղտոտիչները: Ներկայացված է ծանր մետաղների բացասական ազդեցությունը էկոհամակարգերի կայունության, սննդամթերքի անվտանգության և մարդու առողջության վրա: Հանգամանալից քննարկվել է նաև ծանր մետաղների բացասական ազդեցությունները Հայաստանի Հանրապետության տարբեր շրջաններում, լեռնահանքային արդյունահանող արդյունաբերական ձեռնարկությունների շրջակայրում, խոշոր քաղաքների և հատկապես Երևան քաղաքի տարբեր շրջաններում:

Հեղինակը հանգել է այն եզրակացության, որ շրջակա միջավայրի աղտոտումը և էկոլոգիական կապերի խախտումը էկոհամակարգերում դարձել է զլորալ հիմնախնդիր, որի հիմնական պատճառը մարդն է: Էկոլոգիական այս ճգնաժամի հաղթահարման կարևոր քայլը հասարակության գիտակցության էկոլոգացումն է, ինչն էլ կրերի արդյունաբերության տարբեր ճյուղերի էներգետիկայի, զյուղատնտեսության հանքարդյունաբերության և տրանսպորտի էկոլոգացման:

Ատենախոսության չորրորդ գլխում ներկայացված են Դրմբոնի և Կաշենի (Վարդանոր) շահագործվող մետաղահանքերի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, հանքավայրերի էկոլոգիական ռիսկերը, հանքավայրերի ազդեցությունը հողերի ազրոքիմիական ցուցանիշների վրա, կապված օբյեկտներից տարբեր հեռավորությունների հետ:

Հետազոտություններից պարզվում է, որ Դրմբոնի և Կաշենի մետաղահանքերի ուղղակի և անուղղակի ազդեցությունները շրջակա հողատարածքների վրա էկոլոգիական վտանգ չեն ներկայացնում և դա առաջին հերթին պայմանավորված է բարդ ու խայտաբղետ ռելիեֆով, քամիների փնջով և չափավոր արագությամբ, ոռոգման բացակայությամբ, ինչպես նաև հանքարդյունաբերությամբ պայմանավորված է պարզ և անուղղակ ազդեցությունը: Նշվում է, որ հետազոտվող տարածքներից ներկա պայմաններում կարելի է ստանալ էկոլոգիական տեսակետից անվտանգ զյուղատնտեսական արտադրանք:

Հեղինակի կողմից կատարված տեսական, փորձնական և մեթոդական լայնածավալ հետազոտությունների արդյունքները բարձր գնահատելով, այնուհանդերձ ատենախոսական աշխատանքնում տեղ են գտել մի շարք անձշտություններ, բացթողումներ և թերություններ, որոնք բերված են ստորև դիտողություններում:

1. Ատենախոսության 9-րդ էջում գետեղված նկար 1.1.-ին տեքստում հղում չկա, քարտեզը չունի մասշտաբ, չկան բնակավայրերը, մակագրությունները և պայմանական նշանները:
2. Էջ 17-ում հողատիպերի անվանումները ճիշտ չեն ներկայացված, օրինակ՝ նշված է տափաստանային տիպ, անտառատափաստանային տիպ, գորշ շագանակագույն, սևահողանման տիպ, ենթամոխրային հողատեսակներ և այլն: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ տափաստանային հողատիպ գոյություն չունի, կա տափաստանային բնահողային գոտի, որտեղ առկա են հետևյալ հողատիպերը՝ սևահողերը, մարգագետնասևահողային և գետահովտադարավանդային հողատիպերը:

Անտառատափաստանային հողատիպ, անգամ բնահողային գոտի գոյություն չունի: Չկա նաև գորշ շագանակագույն հողատիպ, կա շագանակագույն հողատիպ բաց և մուգ շագանակագույն ենթատիպերով:

Սևահողանման հողատիպ նույնպես չկա: Սևահողանմանը Մարգագետնատափաստանային հողատիպի ենթատիպ է:

Ենթամոխրային հողատեսակը նույնպես անհասկանալի է, եթե ատենախոսը ինկատի ունի պողպոլային հողատիպը, ապա պետք է նշել, որ Արցախում պողպոլային հողատիպ գոյություն չունի:

3. Էջ 34, էջ 56 հղումը աղյուսակ 3.1.-ին և 4.1.-ին բացակայում է:
4. Ատենախոսության էջ 73-ում գետեղված աղյուսակ 4.5.-ում բերված են հետազոտվող օբյեկտների հողերի ազրոքիմիական ցուցանիշները, որտեղ թիվ 2-րդ կտրվածքում AB հորիզոնի հզորությունը 15սմ է, իսկ 3-րդ կտրվածքում 16սմ: Դատելով ատենախոսության տեքստում բերված լուսանկարներից, այդ հողերը անտառային դարչնագույն հողեր են, որոնց հզորություն մեր կարծիքով 40-50սմ-ից պակաս չի կարող լինել:
5. Նույն աղյուսակում (էջ 73) բերված են նաև հետազոտվող օբյեկտների հողերի հումուսի պարունակության տվյալները, որտեղ AB հորիզոնում այն կազմում է 6%, իսկ C հորիզոնում 2.7%, այսինքն AB հորիզոնի հումուսի մոտ կեսը: Համարյա նույն պատկերն է նաև 3-րդ կտրվածքում, որտեղ AB հորիզոնում հումուսը 4.75% է, իսկ C հորիզոնում մոտ 2%; Ընդհանուր

առմամբ աղյուսակում թերված գրեթե բոլոր կտրվածքների Ը հորիզոնների հումուսի պարունակության ցուցանիշները բավականին բարձր են: Մեր կարծիքով այդ հողերի Ը հորիզոնում այն չպետք է գերազանցի 0,8-1,0 %-ը

### **Մեղմագրի համապատասխանությունը ատենախոսության հիմնական բովանդակությանը, հրատարակված գիտական աշխատանքներում ատենախոսության հիմնական դրույթների ընդգրկման ամբողջականությունը**

Ատենախոսության սեղմագիրը կազմված է պահանջվող չափանիշներին համապատասխան և այն հիմնականում արտացոլում է ատենախոսության հիմնական դրույթները, գիտական նորույթը և եզրակացությունները: Ատենախոսության հիմնական դրույթների հիման վրա հրատարակված են 6 գիտական հողվածներ, որից 3-ը համահեղինակությամբ: Բոլոր հողվածները հրատարակված են ԲՈԿ-ի կողմից ընդունված գիտական տեղեկագրերում: Եզրակացությունները բխում են ատենախոսական աշխատանքի գիտական նորույթից և դաշտային, լաբորատոր հետազոտությունների արդյունքներից:

### **Եզրակացություն**

Ամփոփելով <<Արցախի Հանրապետության Դրմոնի և Կաշենի մետաղահանքային արդյունաբերության ազդեցության գնահատումը հող-ջուր-բույս համակարգում>> թեմայով թեկնածուական ատենախոսության ամբողջ բովանդակությունը հանգում ենք հետևյալ եզրակացության:

Գտնում ենք, որ ներկայացված ատենախոսական աշխատանքը կատարված է տեսական, գործնական և մեթոդական բարձր մակարդակով, այն իրեն հետազոտության արդյունքներով, գիտական նորույթով, եզրակացություններով և արված առաջարկություններով նպատակառուղված է լուծելու սոցիալ-տնտեսական և ազրուկության կարևոր նշանակություն ունեցող հիմնախնդիր Արցախի Հանրապետության բնակչիմայական պայմաններին համապատասխան:

Կարծում եմ, որ Տաթևիկ Արթուրի Զհանգիրյանի թեկնածուական ատենախոսական աշխատանքը բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը արժանի է Զ.01.01. <<Ըստիանուր երկրագործություն, հողգիտություն, հիդրոմելիորացիա և

ազրոքիմիա>> մասնագիտությամբ գյուղատնտեսական գիտությունների թեկնածուի  
գիտական աստիճանի շնորհմանը:

**Պաշտոնական ընդդիմախոս՝**

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի  
ազգային համալսարանի ինժեներական գեռդեզիայի  
ամբիոնի աշխատանքները համակարգող,

գ.գ.թ., դոցենտ

Ս. Զ. Կրոյան

Գ.գ.թ., դոցենտ Ս. Զ. Կրոյանի ստորագրություն

հաստատում եմ ՃՇՀԱՀ գիտական բնույթար

տ.գ.թ., դոցենտ

Լ. Զ. Լինյան

12.03.2020.

